


Or. A. N. S. 21.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Հ. Կ. Մ.

Հրատարակչական մասնախուզի № 7.

Ժողովրդական գրքերի շար. № 4.

ԲՈՄԲԱԿ  
ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ  
ԱՌԴՐՎԱՎԿԱՍՈՒՄ

Դիլ. Բակինսկ. Իզդ. Տ-վ. № 26 - 1908

633.5

S-26

Гратәракутюнъ Б. А. К. М.

Гратарақчаканъ масначюги № 7.

Жсговрдақанъ греки шаръ № 4.

Бамбаки мшакутун ʌ Андровкасоумъ

Издание Б А К С

Издательской секции № 7.  
серия народныхъ книгъ № 4.

Культура хлопка въ Закавказы

Арм.

2-4484а

633.5

S-26

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Հ. Կ. Մ.

Հրատարակչական մասնաճիւղի № 7  
Ժողովրդական գրքերի շար. № 4.

30 JUL 2010

## ԲԱՄԲԱԿԻ ՄԵԱԿՈՒԹԻՒՆԸ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ն. ՏԱՐԱՆՏԻՆՈՎԻ

լրացրեց Ն. Ղարագէօղեան.

Բ. տպագրութիւն.

Բ Ա Գ Ո Ւ

Տպագրան Բագ Հայոց Հրան Բնի  
1908.

ԽԿԲ. № 21247

12 AUG 2013



39955-63

## ԲԱՄԲԱԿԻ ՄՃԱԿՈՒԹԻՒՆԸ

# ԲԱՄԲԱԿԻ ՄՅԱԿՈՒԹԻՒՆԸ

Բամբակը պատկանում է այն սակաւաթիւ  
բոյսերի կարգին, որոնք առանձին կարեղու-  
թիւն ունեն Ռուսաստանի արդիւնագործու-  
թեան համար։ Ռուսաց գործարաններում տա-  
րեկան գործ է ածւում մինչև 12 միլիօն փութ  
բամբակ։ Այդ 12 միլիօնից Անդրկովկասը տա-  
լիս է աարեկան 600—700 հազար փութ, իսկ  
Միջին-Ասիան մինչև 3—3 $\frac{1}{2}$  միլիօն փութ։  
Այդպիսով ուրեմն Ռուսաստանը սեփական բամ-  
բակ արդիւնաբերում է ոչ աւելի քան 4 միլի-  
օն, որը կազմում է  $\frac{1}{3}$  մասը այն քանակու-  
թեան, որ հարկաւոր է գործարաններին։ Աշա-  
ցած 8 միլիօն փութ բամբակը Ռուսաստանը ա-  
մեն տարի ստանում է արտասահմանից, գլխա-  
ւորապէս Ամերիկայից։ Հասկանալի է այժմ, որ  
որչափ բամբակ էլ մենք նորից բուսցնելու լի-  
նանք, կարող ենք յոյն ունենալ, որ նա կը  
ծախսի Ռուսաստանում։

բութիւնը գործի յաջողութեան ամենակարևոր ազգակներից մէկն է, որովհետեւ ինչպէս և ամեն մի բոյս, բամբակին էլ ունի իր զանազան տեսակները։ Մեզ մօտ Անդրկովկասում ամենից լաւ է աճում և առատ բերք է տալիս ամերիկական սրան կամ ցամաքային տեսակը, որի սերմը լինում է սպիտակ կամ մոխրագոյն և քիչ կանաչաւուն ու ծածկուած աղւամազով։ Սերմեր ջոկելու ժամանակ պէտք է դանակով մի քանի սերմ կիսել և նայել։ Եթէ միջուկը պարզ գոյն ունի, որոշ աչքի ընկնող սև կէտերով այդ ցոյց է տալիս, որ սերմերը լաւ են, իսկ եթէ միջուկը մութ կամ մոխրի գոյն ունի, այն ժամանակ նրանց համարում են անպէտք սերմեր,

Հոյի մշակումը։ Բամբակը սիրում է թեթև և փափկացրած (փորփող, փոփոշ) հող, ուստի մշակումի յաջողութիւնը կախում ունի նրանից, որ որքան հսարաւոր է հողը լաւ փորփողի (փափկացրուի) և մաքրուի վայրի բոյսերի արմատներից։ Յայտնի բան է, որ հողի ամենալավ փոփողացման միջոցը աշնան վարն է, որի շնորհիւ գութանով բարձրացրած հողի շերտերը

ամբողջ ձմեռուայ ընթացքում ենթարկւած են լինում օդի, սառուցի և ձիւնի ազգեցութեան։ Ոչ մի երկրագործական գործիք չի կարող այնպէս լաւ փափկացնել հողը, ինչպէս սառուցն և ձիւնը, բացի այդ աշունքին վարած հողը ծծում է իր մէջ աւելի շատ խոնաւութիւն, որ նրան շատ պիտի հարկաւորուի գարնանը, իսկ վայրի խոտերի հունգերը ու արմատները, որ ծլած են լինում աշնանը և ծածկում են հողի երեսը, հերկելուց յետոյ ընկնելով շերտերի տակ փթում են ու ռչնչանում։ Այս բոլոր ասածներից պարզ հետևում է, որ հողը պէտք է աշխատել աշնան հերկել։ Լաւ կը լինի հերկել գութանով 4—5 վերշոկ խորութեամբ, իսկ գարնանը նորից արօրով կամ չութով խաչաձև՝ գէպի աշունքւայ հերկածը և ցաքան քշել, յետոյ հաւաքել բոլոր աւելորդ խոտերը

Եթէ չաջողվեց աշնան հերկել հողը, այն ժամանակ անհրաժեշտ է հերկել յունվարին, փետրվարին կամ ամենասուշը՝ մարտի սկիզբներին։ Ըսդհանուրապէս հարկաւոր է աչքի առողջ ունենալ, որ ինչքան հողը շուտ և խորն է հերկված, որչափ ուշադրութեամբ է կատարւած մշակու-

թիւնը, այնչափ բերքը աւելի առատ է ստացւում, որովհետև լաւ հերկելը և հող պատրաստելը մի տեսակ պարարտացնում է նորան։ Միայն այն տեղերում չի կարելի հողը աշնանը հերկել, որտեղ կիման շատ խոնաւ է և առանց այդ հերկումին էլ հողը շատ թաց է։

Հողի պարարտացնելը։—Ամեն մի բոյս աճելու համար հողից ծծում է որոշ քանակութեամբ հիւթ, այնպէս որ եթէ միւնոյն հողի վրայ ցանում են միւնոյն բոյսը մի քանի տարի անընդհատ, հողը կորցնում է իր միջից այն նիւթերի մեծ մասը, առանց որի նոյն բոյսի աճումը նուազում է և բերքի քանակը պակասում. ուրեմն լաւ բերք ստանալու համար հարկաւոր է, նախ հողը լաւ պարարտացնել, ապա իւրաքանչիւ տարի փոխել սերմը, օրինակ մի տարի ցորեն ցանել, երկրորդ տարին բամբակ, երրորդ մի այլ բան և այգպէս հողին հնարաւորութիւն տալ, որ նա ուժասպառ չլինի։ Բամբակի արտը կարելի է պարարտացնել զանազան աղբերով, զանազան մոխիրներով և բոյսերով։ Բոյսերով պարարտացնելու համար հարկաւոր է նրանց կանաչ խոտերը ընկնեն հողի տակ,

փթեն և այգպիսով հարստացնեն—պարարտացնեն հողը։ Բայց պէտք է միշտ աչքի առաջ ունենալ և այն, որ միայն պարարտացնելով չի կարելի ստանալ մշտական լաւ բերք եթէ մենք շարունակ ու անընդհատ ցանենք բամբակը նոյն հողի վրայ, որովհետև որոշ հիւանդութիւններ և վնասակար կենդանիներ, որ յատուկ են բամբակին, բուն են գնում այդ հողի վրա և վնասում ցանքսին։ Ամերիկայի դոկտոր Կլաուդը բաժմնում է իր հողերը երեք մասի և ցանում է մէկում բամբակ, երկրորդում սիմինդր և երրորդում ցորեն և այդ հասարակ բանը անելով նա կարողանում է ստանալ մէկ դեսեատինից 100 փութ մաքուր բամբակ—դոկտոր Կլաուդի ցանքսերը լինում են այսպէս։

Ա. տարի	Բ. տարի	Գ. տարի
1-ին արտը	Բամբակ	Սիմինդր
2-րդ »	Սիմինդր	Ցորեն
3-րդ »	Ցորեն	Բամբակ

Բայց որովհետեւ մեզ մօտ Սիմինդրի այնքան էլ պահանջ չկայ, մենք խորհուրդ ենք տառմու այդ սերմափոխութիւնը անել հետևեալ կերպով՝

Ա. տարի	Բ. տարի	Գ. տարի
1-ին արտք	Բարմակ	Ցորեն
2-րդ	Ցորեն	Լոբի
3-րդ	Լոբի	Բամբակ
		Ցորեն

Այն արտում, որ նշանակւած է լոբի ցանելու համար, կարելի է ցանել և սիսեռ, բակլա, ոսպ, քնչիթ:

Այդ բոլոր բոյսերը պարարտացնում են հողը նրանով, որ նըանցից յետոյ հողի մէջ տելանում է բորակածին, որը շատ կարևոր է բոյսի համար:

Ցանքը: Բամբակի ցանքսը ամբողջ Անդրկովկասում պէտք է կատարւի ալլրիլի Յ-ից մինչև 20ը, յամենայն դէպս երբէք ոչ տւելի ուշ

քան մայիսի 1-ը: Ցանելը անհրաժեշտ է կանունաւոր շարքերով, այնպէս հաշւերով, որ շարքը շարքից հեռու լինի 1—1<sup>1/2</sup> արշին, իսկ թուփը թուփից 1<sup>1/2</sup> արշին: Կարելի է թողնել միմեանց մօտ և երկ-երկու բոյս, միայն այդ դէպքում պէտք է հետևեալ զոյզը 1 արշին հեռաւորութիւն ունենայ: Մի դեսեատինի վրա պէտք է ցանել 2—2<sup>1/2</sup> փութ սերմ և ոչ աւելի քան 3 փութ, որովհետեւ որքան որ խիտ է ցանած վինում բամբակը, այնքան բերքը պակասում է: Կանոնաւոր շարքերով ցանելը անհամեմատ լաւ է, որովհետեւ այդպիսով հեշտանում են բոլոր յետազայ զբաղմունքները, օրինակ ջրելը, անպէտք խոտեր հեռացնելը, հողի վերի կեղել փափկացնելը, բամբակի հաւաքելը և այլն և այլն. բացի այդ, այդպէս ցանելով բոյսերը կարողանում են աւելի շատ և աւելի կատարեալ կերպով ստանալ արեգակի ճառագայթները, բերքը անհամեմատ շատ է լինում և բամբակի համենելը առաջ է ընկնում, որ կարենը նշանակութիւն ունի մի քանի տեղերում: Կանոնաւոր շարքերով ցանելը կարելի է կատարել և ձեռքով, բայց գործը աւելի դիւրացնելու համար

Նպատակայարմար է գործածել ամերիկական ցանելու գործիքները (Թիֆլիսում հասն արժէ 50 բուրլի), եթէ շարքերով ցանելու այդ ամերիկական գործիքը չկայ, կարելի է շարքերով ցանել, օգտուելով և հասարակ արօրից (չութ): Եթէ սերմը ցանւի արօրի ակոսներում մէկ մէջ թողած, այսինքն ցանւին 1-3-5 և այլն ակօսները և բաց թողնւին 2-4-6 և այլն, այն ժամանակ կստանանք կանոնաւոր շարքեր միմեանցից մօտաւորապէս՝ արշին հեռաւորութեամբ:

Եթէ ցանքսը կատարւում է խոնաւ երկրում և խոնաւ գետնի վրայ, սերմը պէտք է զցել ակօսների բարձր կատարներում որ շուտ տաքանայ և լաւ աճի: Խոկ եթէ ցանքսը կատարւում է չոր հողի վրայ և չոր երկրում, սերմը պէտք է զցել տկօսների խոր յատակում, որպէս զի խոնաւ մնայ և նորածիլ բոյսը չխառամի չորութիւնից: Ցանելուց առաջ հարկաւոր է սերմը թրշել ջրով և խառնել աւագի հետ որ ցանելիս չկաշին միմեանց: Բացի այդ ցանքսի շարքերը հարկաւոր է անել հիւսիսից դէպի հարաւ: Այդ գետքերաւմ արեկ լոյսը ամբողջ օրը լուսաւորում և տաքացնում է բամբակի բոյսը

թէ արկելքից և թէ արկմուաքից. ինչպէս էլ որ լինի բամբակի ցանքսը—շարքերով թէ խառը պէտք է լինի բաւականին նոսր, որ բամբակի թուփի կողքի ճիւղերը միմիանց չխանգարեն: Բամբակի ամենաբերրի թուփը նա է, որի ճիւղերը գլխաւոր բնի հետ կազմում են ուղիղ անկիւն. ի հարկէ այդ լինում է այն դէպքում երբ բամբակը ցանւում է նոսր, խկ մեր երկրում սովորաբար ցանւում են 2—3 անգամ աւելի խիտ քան հարկաւոր է և եթէ գրավրայ աւելացնենք և այն վատ սովորութիւնը, որ միշտ բամբակը ցանւում են խառը, այսինքն ոչ շարքերով, այն ժամանակ պարզ կինի թէ ինչու մեր երկրում բամբակից ստացւած բերքը միշտ աւելի նուազ է լինում քան ուրիշ երկրներում:

Բամբակի ցանելը ամենամեծ նշանակութիւն ունեցող գործողութիւններից մէկն է, որովհետև եթէ կանոնաւոր և լաւ է կատարւած այդ գործը, այն ժամանակ կարելի է ասել, որ կիսով չափ ապահովւած է բերքը: Ցանելուց յետոյ ցանքսը պէտքէ ծացկել հողի շատ բարակ շերտով, օրինակ՝ զի վերշոկ և ոչ աւելի

քան 1 վերջոկ հաստութեամբ. այդ կարելի է  
անել ցաքանով կամ տափանով:

Զ ր ե լ ը: Եթէ բամբակը հարկաւոր է լի-  
նում ջրել ցանելու ժամանակ (որը համարեա  
ամեն տեղ ընդունւած է Գանձակի, Բագուի և  
Երևանի Նահանգներում), այն ժամանակ աւելի  
լաւ է արդէն պատրաստ հողը մինչև ցանելը  
ջրել—տեղական բարբառով «արաթ» անել, իսկ  
3—4 օրից, երբ հողը մի փոքր կը չորանայ  
արօրով երեսանց հերկել և յետոյ արդէն ցա-  
նել: Եթէ ցանկանում են, որ սերմերը շուտ  
ծիլեր տան՝ այն ժամանակ մինչև ցանելը մի  
կամ երկու օր սերմերը հասարակ ջրի մէջ  
թրջում են: Երբ արար մինչև ցանելը ջրված է  
եղել, անպէտք խոտերը աւելի քիչ են բանում,  
հողը աւելի փուփը է մնում, հողի երեսին կեղե  
չէ գոյանում և առհասարակ թէ միաժամանակ  
են սկսում ծիլերը գուրս գալ և թէ բոյսերը  
համեմատաբար աւելի ուշ են ջրի կարիք զգում:  
Իսկ եթէ ջրում են արտը ցանելուց յետոյ, այն  
ժամանակ բոլորովին աւելորդ է մինչև ցանելը  
սերմերը թրջելը: Արեելեան Անդրկովկասում  
համարեա ամեն տեղ ջրում են բամբակի ցանք-

որ, իսկ եթէ մի որ և է տեղում կլիմայի թէ  
հողի խոնաւութեան պատճառով չեն ջրում,  
ինչպէս, օրինակ, Քութայիսի նահանգում, Զա-  
քաթալի կողմերում կամ Կախեթում, պատճառ  
այն է, որ այդ տեղերում առանց արհեստա-  
կան ոռոգման էլ կարելի է լաւ բերք ունենալ:  
Յամենայն դէպո՞ բամբակ ջրելիս պէտք է մեծ  
զգուշութիւն գործ դնել, աչքի առաջ ունենա-  
լով այն, որ ջրելը նպաստում է հողի սաստիկ  
կարծրանալուն և ցրտացնում է նրան, հողի  
մակերեսոյթին կեղե է գոյանում և նա յետոյ  
տրաքտրաքում է. Բացի այդ անպէտք բոյսերն  
էլ սկսում են առաւ զարգանալ: Ուստի եթէ  
որ և է յոյս կայ, որ ծիլերը միաժամանակ լ-  
լաւ կը սկսեն գուրս գալ, աւելի լաւ է բամբա-  
կի ցանքուը չը ջրել: Օրինակի համար, կարայ-  
եազի փորձական տարատկում արդէն մի քանի  
տարի է, որ աջողվում է ցանելու ժամանակ չը  
ջրել, որովհետև այդ ժամանակ, մօտաւորապէս  
ապրիլի կէսին, այստեղ սկսում են շարունակ  
անձրևներ և այնքան թացացնում են հողը, որ  
երբեմն աւելի շատ են տալիս, քան անհրաժեշտ է:  
Որովհետև ցանքսեր ջրելը մեր Արեելեան

Անդրկովկասում գիղատնտեսական անհրաժեշտ  
և գլխաւոր գործոններից մէկն է. հարկաւոր  
ենք համարում այդ մասին խօսել աւելի մասրա-  
մասնօրէն:

Առհասարակ արտերը ջրում են բնական և  
արհեստական միջոցներով, առաջին միջոցը  
անձրեներն են, որ արտերը ջրում են առանց  
մարդկային աշխացութեան, իսկ երկրորդ մի-  
ջոցը գործադրում են մարդկի մի որ և է տե-  
ղից ջուր բերելով և ջրելով իւր ցանքսերը:

Արելեան Անդրկովկասում արտերը ար-  
հեստական կերպով ջրելը դարձել է մի ան-  
հրաժեշտութիւն, և ամենքը ջանում են որքան  
կարելի է շատ օգտել այդ միջոցից, բայց չը-  
պէտք է կարծել թէ որքան շատ ջրենք արտերը,  
այնքան աւելի լաւ կաճեն մեր բոյսերը:

Այդ բանում սխալներ չանելու համար  
հարկաւոր է գիտենալ, որ արհեստական կեր-  
պով արտեր ջրելը, յաճախ անբարեյաջող ազդե-  
ցութիւն է անում հողի վերայ, հետեաբար և  
բերքի վերայ. մանաւանդ երբ այդ գործողու-  
թիւնը կատարւում է մեր մէջ ոռոգման ներ-  
կայ ձևերով, այսինքն երբ հողը ամբողջապէս

ծածկւում է ջրով, թողնելով միանգամից հողի  
վերայ այնպիսի մեծ քանակութեամբ ջուր, որը  
մի քանի անգամ աւել է լինում քան ամենա-  
հեղեղ անձրեկի ժամանակ եղած ջուրը, մենք  
դորանով սաստիկ հովացնում ենք հողը, որը  
ջրելուց յետոյ նստում է և պնդանում, իսկ  
արեկի կիզիչ ճառագայթներից տրաքտրաքում է  
և կեղեւ կազմում իւր մակերեռյթի վերայ:

Պարզ է, որ այդ բոլորը վսասակար են  
ցանքսերի համար, մանաւանդ բամբակի համար,  
որը պահանջում է տաք և փափուկ (փոփոշ)  
հոգ:

Արհեստական ոռոգումը վատ է ազդում և  
փշացնում է հողը, այդ մենք պարզ տեսնում ենք  
ըրինձի արտերից, եթէ միենոյն հողի վերայ  
2—3 տարի իրար յետևից ցանում են ըրինձ,  
այդ հողը յետոյ 2—3 տարի շարունակ անպէտք  
է լինում որ և է ուրիշ բոյսի համար:

Այսպէս ուրեմն արհեստական ոռոգումը թէ և  
անհրաժեշտ է մեր երկրում, բայց նա վսա-  
սակար է. 1) նրանով որ հողը ջրելուց յետոյ  
սաստիկ պնդանում է ևսառչում, 2) ջրելուց յե-  
տոյ ուժեղ կերպով սկսում են աճել վսասա-



կար վայրի բոյսերը, որոնցից արտը մաքրելը աւելացնում է զիւղացու աշխատանքը։ Բացի այդ, ջրելուց յետոյ հողի երեսին կեզի է գոյանում, որը հարկաւոր է ոչնչացնել, եթէ ոչ կը կորչի ամբողջ ցանքսը։ Անժամանակ ջրելը նոյնպէս ունի իւր ֆասակար կազմերը։ Եթէ նա կատարւում է ժամանակից շուտ, նա արագացնում է բոյսի աճումը; որը տալիս է շատ ձիւղեր և տերեներ և քիչ բերք, բացի դրանից այդպէս աճող բոյսերը պահանջում են ոռոգման կրկնութիւններ որով աւելի փշանում է հողը։

Ուշացած ոռոգումը ուշացնում է և բոյսի աճումը և բամբակի քաղը, որով թէ բերքն է փշանում և թէ տեսակը վատանում, չափազանց ջրելը բացի վերև յիշւած վատ հետևանքներից առաջ է բերում և ժանդ բոյսերի վերայ, որով դարձեալ պակասում է բերքը։

Ասածներիցս պարզ երեսում է, թէ որքան զգոյշ պէտք է լինել ոռոգման հարցում, Բամբակի արտը ջրւում է տարին քանի անգամ։ Առաջին անգամ ինչպէս ասացինք պէտք է արտը ջրել ցանելուց առաջ, և զգոյշ լինել,

որպէսզի չը սառչի հողը գարնան առանց այն էլ սառը եղանակին։ Երկրորդ անգամ պէտք է ջրել այն ժամանակ, երբ նկատում է, որ բամբակի թուփի վերև տերեները սկսում են թառամել և կախ ընկնել։ Յամենայն դէպս, լաւ է երկրորդ ջուրը տալ աւելի ուշ քան շուտ։

Եթէ հողը ժամանակին փափկացրած է և վայրի բոյսեր արտում քիչ են և եթէ մայիսը մինձրեային է, երկրորդ ջուրը կարելի է տալ միմիայն յունիսին։ Երրորդ և վերջին ջուրը պէտք է տալ յուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբներին, բայց ոչ ուշ դրանից ուշ ջրելը միշտ ֆասակար է բամբակի համար, չպէտք է մոռանալ, որ մի անգամ ջրելը կարող է բամբակի արտի բերքը կիսով չափ պակասացնել։ Վերջացնելով ջրելու հարցը կաւելացնենք, որ աւելի լաւ է արտը ջրել գիշերը կամ ամպամած օրը։

Բամբակի խնամելը, եթէ հողը ջրելուց կամ անձրեներից կեզի է բռնում, այն ժամանակ անհրաժեշտ է կամ ցաքանով կամ տափանով փափկացնել, որ քնքոյշ ծիլերը չը դժուարանան դուրս գալի։ Սկզբներում բոյ-

աերը տոհասարակ դանդաղ են զարգանում, ուստի պէտք է կարելիին չափ աշխատել օգնել նրանց, այսինքն, եթէ աեսնում էք, որ շատ խիտ է ցանւած, պէտք է նօսրացնել ցանքսը երկու երեք շաբաթւայ ընթացքում, սկսած առաջին ծիրերը երեալու օրից: Աւելորդ խոտերը մեծ զգուշութեամբ պէտք է հեռացնել և որ ամենազլիսաւորն է՝ հողը վիխրացնել, որպէս զի բոյսերը սկսեն արագ և լաւ մեծանալ: Ամառւայ ընթացքում պէտք է մի քանի անգամ քաղ հանել և հողը վիխրացնել մինչև մի վերշոկ խորութեամբ արտի ամբողջ աւարածութեան վրա, որովհետեւ հողը փափկացնելով օգը և լոյսը աւելի շատ են կարողանում մտնել հողի մէջ և մի և նոյն ժամանակ թոյլ չեն տալիս, որ գետնի ստորին շերտերից շատ խոնաւութիւն դուրս գայ, բոյսը սկսում է աւելի լաւ աճել, աւելի պողառու լինել և արագանում է բամբակի հանելը:

Այն դէմքում, երբ արտը ցանւած է կանոնաւոր շարքերով, հողի փափկացնելը նպատակայարմար է կատարել առանձին գործիքներով, —որ կոչւում են «մօտիդա»—(այդ գործիք-

ները թիֆլիսում ծախւում են 25-ից մինչև 30 բուզլիով): Այդ գործիքը այն առաւելութիւնն ունի, որ նա փախարինում է 20—30 մարդի և բացի այդ՝ հողը այնքան պատրաստում է, որ բամբակից յետոյ ցանած բոյսերն էլ մեծ աջողութեամբ են բուսնում: Այս գործիքը նոյն աջողութեամբ պէտք է գալիս և խաղողի այգու, ծխախոտի, սիմինդրի, գերչակի և այլ շատ բոյսերի համար: Եթէ գործիքը գործադրուում է մի քանի նպատակների համար, անկասկած նրա վրա արած ծախքը թեթեանում է և կատարելագործութիւն մտցնելը հեշտանում:

Կորսելը: Երբ բոյսը համնում է  $\frac{3}{4}$  արշինի, այն ժամանակ օգտաւէտ է բոյսի հայրերը մի փոքր կտրտել. դրանով բամբակի հանելը արտգանում է. բայց այդ գործողութիւնը պէտք է կատարել ոչ ուշ յուլիսի 1-ից, եթէ ոչ բամբակի զարգացումը կարող է կանգ առնել: Բոլոր վերև ասածներից պարզ երեսում է, որ ամառւայ ընթացքում բամբակի արտի ինամքը կայանում է. 1) հողը փափկացնելում, 2) քաղիան անելում, այսինքն վայրի բոյսերի դուրս տալում՝ և ոչնչացնելում, 3) արտը նօսրացնելում ( $\frac{1}{2}$

արշին բոյսը բոյսից և 1 արշին շարքը շարքից) 4) բոյսի ծայրերը կտրելում (ոչ ուշ քան յուլիսի սկիզբը) և 5) ջրելում: Ի հարկէ բոլոր այդ գործողութիւնները շատ պարզ են և հասարակ, բայց որպէս զի նրանք օգտաւէտ և նպատակայարմար լինեն, հարկաւոր է լաւ յիշել բոլոր վերև ասածները, եթէ ոչ կարող է պատահել որ այդ գործողութիւններից մէկը կամ միւսը օգտաւէտ լինելու փոխարէն վնասակար լինին բամբակի արտին և թանգացնելով ծախքը պահապացնեն արդիւնքը:

Հիւանդութիւններ: Բամբակի հիւանդութիւններից Անդրկովկասում ամենից շատ է տարածւած ժանրի (չոռ կամ աղ): Այդ հիւանդութիւն առաջացնողները փոքրիկ սունկեր են, որոնք զարգանում են տերևների և պտուղների վրա, Վերջիններս սկսում են կարմրել, յետոյ մոխրի գոյն են ստանում և թափւում: Հիւանդութիւն երևալու պատաճառներն են կամ աւելորդ խոնաւութիւնը կամ հողի ուժասպառ լինելը և կամ անհոգ խնամատարութիւնը: Արտերը պարաբռացնելով և խնամքը աւելացնե-

լով՝ կարելի է մաքառել այդ հիւանդութեան գէմ:

Ա. Եխատովի համար վերջը մինչեւ հաղը: Մինչեւ յուկիսի կէսը և ոչ ուշ քան օգոստոսի սկիզբը, բոլոր աշխատառութիւնները բամբակի արտիմէջ պէտք է վերջացրած լինին և արտը մինչև քաղը պէտք է հանգիստ մնայ: Այդ ժամանակին արտը արդէն լինում է շքեզօրէն զարգացած և ոչ թէ միայն արտում գործելը, այլ նոյնիսկ նորա մէջ մանդալը կարող է վնասել նորան, որովհետեւ կը կոտրատուեն ճիւղերը և կը թափուին ծաղիկները: Օգոստոսի կիսից բամբակի թուփի ստորին հասկ խողակները (պտուղը) սկսում են հասնել և բացուել, բայց քաղը սկսում է սեպտեմբերի սկզբից մինչև 10-ը: Այդ ժամանակ քաղում են բոլոր ստորին մասի հասած բամբակը: Մօտաւորապէս 2—3 շաբաթից յետոյ կատարում է երկրորդ քաղը: Երրորդ քաղը լինում է հոկտեմբերի վերջերին կամ նոյեմբերի սկիզբներին:

Աերմի ջոկելը եւ ընտելլը: Լաւ սերմը անկասկած մեծ նշանակութիւն ունի գործի աջողութեան համար, եթէ տարուց տարի սեր-

մերը վերցնւեն լաւ զարգացած թուփերից և այդ թփերի վրա գտնուող միջին խողակներից, որովհետեւ գրանք աւելի լաւ են լինում և խոշոր, այդպիսի սերմերից, կարելի կը լինի ստանալ շուտ համոզող լաւ բերք տուող և անհամեմատ լաւ յատկութիւն ունեցող բամբակ: Յամենաբն դէպս, ցանելու համար պէտք է գործ ածել լաւ հասած և չորացած սերմեր: Թփի ներքին կամ միջին մասերից հաւաքած սերմերից բամբակը շուտ է հասնում: Պէտք է աշխատել ոչ մի դէպում չը գործածել այնպիսի սերմեր, որոնք կամ վերին մասից են հաւաքուած կամ շատ ուշ են հաւաքուած, որովհետեւ առհասարակ դրանք բոլորովին հասած չեն լինում և չեն կարողանում տալ լաւ բոյսեր:

Հողի ուժասպառ լինելը: Ոչ մի բոյս այնքան քիչ չէ յոզնեցնում հողը, ինչպէս բամբակը: Եթէ մենք կարողանայինք վերադարձնել հողին բամբակի ծղոնը և սերմերը աղբի ձեռվ, այն ժամանակ հողը համարեա թէ ուժասպառ չի լինի, իսկ եթէ վերցնենք և բոյսը, և սերմերը և բամբակը և ոչինչ դրանցից չը վերադարձնենք հողին, այն ժամանակ հողը սաստիկ ուժասպառ է լինում:

Հողի պարագայումը: Բամբակի արտը, պարարտացնել կարելի է ամեն տեսակի աղբով, մոխրով, կիրով և այլն: Մանաւանդ լաւ պարարտանում է հողը գանագան բուսական մնացորդներից, որովհետեւ նրանք նպաստում են հողի փափկանալուն և հետևաբար բոյսի աջող զարգանալուն և շուտ հասնելուն:

Բամբակը աւելի աջող է զարգանում այն ժամանակ, երբ նախընթաց տարիները այդ արար եղած է առևոյտի կամ եօնջի, խոտահարքի, չալթքի և կամ բոստանի տեղ: Իսկ բամբակ եղած տեղում միւս տարին շատ լաւ են բուսնում ցորեն, գարի, եգիպտացորեն և առհասարակ հացարոյսերը:

Քամիներից պահպանելը: Այն տեղերում, որտեղ ամառուայ կամ մանաւանդ աշունքուայ սկզբներում սաստիկ քամիներ են լինում, նպատակայարմար է այնպէս անել, որ քամու կողմը կամ ծառեր լինեն կամ ցանկապատեր:

Սնասուներից պահպանելը: Տնային կենդանիներից պահպանելու համար ցանքոր, աշխատում են արտի չորս կողմը ցանել 2—3 շարք գերչակ: անսասունները չեն սիրում գերչակի հոտը և նրա տերեների համը:

Հաւամելլր: Բամբակը հաւաքելու ժամանակ պարարտացնել կարելի է ամեն տեսակի աղբով մոխրով, կիրով և այլն: Մանաւանդ լաւ պիտի ուշադրութիւն դարձնուի, որ նա բոլորովին հասած և չոր լինի և պէտք է աշխատել իւրաքանչյուր անգամի հաւաքածը առանձին պահել:

Չորացնելլր եւ պահելլր Բամբակը անհրաժեշտ է պահել չոր և քամի խաղացող գաւիթներում, հակառակ դէպքում խոնաւութիւնից և օդի տաքանալուց բամբակը տաքանում է, փշանում և դեղնում, իսկ սերմերը փտում են: Բամբակը կարելի է աշունքին արեգակի տակ չորացնել, որից նա թէ լաւանում է և թէ սպիտակում:

Սերմի անջատելլր: Երբոր բամբակը բաւական չորացել է, այնպէս որ սերմը ատամով լաւ կոտրում է, այն ժամանակ միայն պէտք է իստակել. հակառակ դէպքում սղոցի բերանը շուտով բռնւում է և սերմի վրա բաւականաշփ բամբակ է մնում:

Սերմերը իբրեւ անտունների կերակուր: Առհասարակ երբէք չը պէտք է բամբակը ծա-

խել չը մաքրած, այսինքն սերմերը ճետը, որովհետև այդ սերմերի մէջ կմն շատ լաւերը, որոնք կարող էին լաւ սերմացու լինել. իսկ ինչ վերաբերում է մնացած սերմերին, նըանք էլ յարմար են, իբրև կենդանիների համար կերակուր: Պէտք է նկատել, որ այդպիսի կենդանիներից ստացած աղըն էլ լաւ պարարտացնող նիւթ է բամբակի արտերի համար: Միայն չը պէտք է կենդանիներին տալ 3—4 կամ 5 ֆունտից աւելի և պէտք է խառնել նրան դարմանի հետ: Այդ քանակութիւնը կարելի է տալ եզներին, գոմէշներին, ստերջ կովերին, և ոչ աւելի 3 ֆունտից կաթնատու կովերին, որովհետև կաթը անախորժ համ է ստանում. ոչխարներին կարելի է տալ մինչև 1 ֆունտ: Սերմերով կերակրելուց կենդանիների թէ միսը, թէ ոյժը և թէ կաթն աւելանում է. այն գէպքում, երբ սերմից իւղ է հանուած և կենդանիները ստանում են միայն նրանց քուսպը, սրան կարելի է աւելի տալ, որովհետև արդէն իւղը հանած է և քուսպը մնասակար չէ:

Բամբակի ծախելլր: Աւելի լաւ է, եթէ բամբակը զուտ, մաքուր բամբակ է, առանց

սերմի: Դա գնողի համար ձեռնտուէ: Երկրորդ՝ սերմ հանելը այն օգուտն ունի, որ այդ սերմից կարելի է ընտրել լաւերը սերմացուի համար: Առանց սերմի բամբակը աւելի թանգ է ծախւում, քան սերմով:

Սերմից մարդելր: Բամբակ մաքրելու գործիքները, որ յայտնի են կօտոճնջին անունով, թիֆլիսում ծախւում են 250—300 ըուրիով և մաքրում են մի օրում (24 ժամ) մինչև 40—50 փ. մահուր բամբակ կամ մինչև 120—200 փութ բամբակ սերմի հետ միասին: Այն տեղերում, որտեղ այդ մեքենաներից շատ չը կան և շատ մարդ կարողութիւն չունի նրանց ձեռք բերել, զիւղի ամբողջ հասարակութիւնը կարող է ընդհանուր ուժով գնել և գործածել: Այդպիսի դէպքերում զիւղացիներին օգնութեան են համառմ, մասր վարկային և փոխատու խնայողական ընկերութիւնները զիւղերում, այդ բանկերից զիւղացին պարտք վերցնելով, կարող է ձեռք բերել վերոյիշեալ գործիքներից և ժամանակի ընթացքում մաս մաս վճարել իւր պարտքը բանկին: Փոխատու-խնայողական, վարկային և կօօպերատիւ ընկերութիւնները,

որոնցից մենք բոլորովին զուրկ ենք և բոլորովին չենք մտածել կազմել այդպիսի ընկերութիւններ, չնայած որ պետական գանձարանը մինչև անգամ իբրև գրամագլուխ մինչև 3000 ր. փող է տալիս 6<sup>0</sup> այդպիսի ընկերութիւններին: Իսկ, զօրօրինակ, մի փոխատու խնայողական ընկերութիւն կազմելու համար, հարկաւոր է, որ 20—50 մարդ հաւաքեն մի յայտնի գումար, որից յետոյ գիմում անուի կառավարութեան ընկերութեան կանոնագրութիւնը հաստատելու համար և իբրև գրամագլուխ գանձարանից 1000, 2000 կամ 3000 ր. փոխարինաբար առալու համար: Ընկերութիւնը կազմելուց յետոյ նրա բոլոր անդամների անձնական պատասխանատութեամբը ընկերութեան իւրաքանչիւր անդամը կը կարողանայ փոխարինաբար վերցնել նոյն ընկերութիւնից 8, 10 կամ 12<sup>0</sup> դրամ, իրան պէտք եղած գործիքներ, սերմացու, անասուններ և այլ պիտոյքներ գնելու համար: Այդպիսի ընկերութիւնները կարող են և միջնորդի դեր խաղալ իրանց անդամների համար այն է՝ գնել զանազան իրեր և անասուններ զիւղացու կամ արհեստաւորի համար և

ծախել նոցա ապրանքը քաղաքներում, մի անգամ ընդ միշտ ազատելով գիւղացուն վաշխառուների ձեռից: Վերջապէս այդ ընկերութիւններից կարող են օգտուել և այն անձինք, որոնք պահ կը տան նրանց մօտ իրանց խնայած փողերը աւելի մեծ տոկոսով (օր, 5 կամ 6<sup>0</sup>), քան տալիս են զանազան բանկեր և խնայողական կասաներ: Այդպիսի պահ տուած փողերը երբէք չեն կորչի, որովհետեւ ինչպէս բոլոր բանկային և խնայողական հասատութիւնները, նոյնպէս և վերոյիշեալ փոխատու-խնայողական և կօպերատիւ ընկերութիւնները կունենան գանձապահներ պատասխանատու արտէներից: Այսօր Գերմանիայում գոյութիւն ունի կօպերատիւ ընկերութիւնների մի ցանց, որ հաշւում են 11,121 միմեայն փոխատու-խնայողական ընկերութիւններ, իսկ Լեհաստանում այժմ գոյութիւն ունին 1020 աւելի այդպիսի փոխ-խնայող, ընկեր., որոնց տարեկան շրջանառութիւնը հաւասար է 24,500,000 րուբլու, որ ամբողջութեամբ բանւորների և գիւղացիների խնայած ու օրի համար պահ տուած փողն է:

Այս ասպարէզում և այս ուղղութեամբ աշ-

խատելու է և մեր ինտելիգենցիան, եթէ ուղում է մի որեւէ օգնութիւն հասցնել մեր գիւղացուն, արհեստաւորին կամ բանւորին և օրառաջ ազատել նրանց վաշխառուների ձեռքից: Ահա այս ամենը աչքի առաջ ունենալով, Միութիւնը ձեռք է բերել կառավարութիւնից իրաւունք՝ ոչմիայն վարկային ընկերութիւնները հիմնելու այլ և ղեկավարելու այդ ընկերութիւնների գործունէութիւնը, հսկելով կանոնաւոր հաշւապահութեան, փողերի նպատակայարմար գործադրութեան վրայ և այն, մի խօսքով Բ. Հ. Կ. Միութիւնը այս հարցի նկատմամբ, ձեռք է բերելայն բոլոր իրաւունքները, ինչպիսի իրաւունքներ որ ունին Ռուսաստանում զեմստվուները:

Ի նկատի առնելով այս՝ Բ. Հ. Կ. Միութեան հողային Մասնաճիւղը (մելիօրատիւ-սեկցիան) յայտարարում է գիւղացիներին, բանւորներին և արհեստաւորներին, որ եթէ նրանք կը ցանկան որ և է տեղ հիմնել վարկային ընկերութիւններ, դիմեն Միութեան, որը առաջարկում է իր ծառայութիւնները կազմակերպելու այդ գործը: Բ. Հ. Կ. Միութիւնը գործը կազմակերպելու համար՝ Ա. կ'ուղարկի իւր լիա-



զօր-ագենտին այն գիւղը, որի բնակիչները ցանկութիւն կը յայտնեն իրանց գիւղում վարկային ընկերութիւն հիմնել. ուր լիազօր-ագենտը մանրամասն կը ծանօթացնէ գիւղացիներին գործի հետ. Բ. նոյն գիւղում վարկային ընկերութիւն բաց անելու համար, կառավարութիւնից թոյլաւութիւն կըստանայ. Գ. ձեռք կը բերի կառավարութիւնից փոխառութիւն և տոկոսվ և Գ. առհասարակ ամեն կերպ կ'աջակցի գիւղացիներին, մինչև որ գործը վերջնականապէս ամուր հիմքերի վերայ կը դրուի և այլ ևս կողմնակի աջակցութեան կարիք չի դգալ:

Ամենայն տեսակ տեղեկութիւնների և առհասարակ վարկային ընկերութիւնների վերաբերեալ գործերի համար ցանկացողները կարող են դիմել Բ. Հ. Կ. Միութեան.

Մասնաւոր գնողը, եթէ վարձով տալու լինի բամբակ մաքրելու մեքենան, կունենայ այնքան շահ, որ մեքենայի ծախքը կը հանի և կունենայ զուտ արգիւնք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0293591

19-248

H 2-4.



Գ Ի Ն Ն Ե Յ Կ Ո Պ Ե Կ .